BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

06.04.2016թ.
N 031601

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱԾ- 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սպայկա» ՍՊԸ-ի Մասնակիցներին

Մենք իրականացրել ենք «Սպայկա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության և նրա դուստր ընկերությունների՝ «Սպայկա-Ռուս» ՍՊԸ-ի և «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ Ընկերություն) կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտի ենթարկված անձի ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում սույն համախմբված հաշվետվությունների՝ Ֆինանսական Հաշվետվության Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվության շրջանակներում է համապատասխան ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման համար, հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում նպատակահարմար հաշվապահական գնահատումների կատարումը:

BAKER TILLY
ARMENIA

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պահպանենք էթիկայի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով Համախմբված Ֆինանսական Հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է հաշվապահական հաշվառման կիրառվող քաղաքականության համապատասխանության և ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները համապատասխան ու բավարար հիմք են մեր աուդիտորական եզրակացության համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության համախմբված ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական արդյունքների և համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Այլ հանգամանքներ

Ընկերության 2014թ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2014թ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, այդ իսկ պատճառով մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2014թ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր եզրակացությունը չի ներառում վերապահում՝ այս հարցի առնչությամբ:

Աուդիտոր

Մ.Հայրապետյան

6 ապրիլի 2016թ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2015թ ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2015թ.	2014թ.
Հասույթ	6	29,850,762	21,363,211
Վաճառքի ինքնարժեք	7	(20,561,112)	(14,957,950)
Համախառն շահույթ		**9,289,650**	**6,405,261**
Իրացման ծախսեր	8	(2,900,468)	(1,842,643)
Վարչական ծախսեր	9	(1,031,461)	(832,056)
Այլ եկամուտներ	10	622,859	205,108
Այլ ծախսեր	11	(1,189,744)	(745,856)
Գործառնական շահույթ		**4,790,836**	**3,189,814**
Ֆինանսական ծախս, զուտ	12	(2,960,323)	(2,075,612)
Շահույթ մինչև հարկումը		**1,830,513**	**1,114,202**
Շահութահարկի գծով ծախս	13	(221,899)	(39,089)
Զուտ շահույթ		**1,608,614**	**1,075,113**
Այլ համապարփակ եկամուտ			
Հիմնական միջոցների վերագնահատումից աճ		27,350	27,850
Հետաձգված հարկային ծախս	13	(5,470)	(5,570)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ		**21,880**	**22,280**
Ընդամենը համապարփակ եկամուտ		**1,630,494**	**1,097,393**

Դավիթ Ղազարյան
Տնօրեն
6 ապրիլի 2016թ

Սուրեն Սկրտումյան
Ֆինանսական տնօրեն

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2015թ-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2015թ.	2014թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	23,673,579	22,876,346
Ոչ նյութական ակտիվներ	15	16,164	18,770
Հետաձգված հարկային ակտիվներ	13	105,287	96,872
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18	281,491	596,872
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**24,076,521**	**23,588,860**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	1,697,265	1,850,924
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	282,428	138,750
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18	6,555,381	2,872,709
Տրամադրված փոխառություններ	19	1,042,058	44,600
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**9,577,132**	**4,906,983**
Ընդամենը ակտիվներ		**33,653,653**	**28,495,843**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	20,1	6,194,169	6,194,169
Վերագնահատման պահուստ	20,2	44,160	22,280
Չբաշխված շահույթ		4,447,358	3,815,805
Ընդամենը սեփական կապիտալ		**10,685,687**	**10,032,254**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	11,931,660	12,662,534
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**11,931,660**	**12,662,534**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	7,799,584	4,793,072
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	3,226,832	1,007,983
Ընթացիկ հարկային պարտավորություններ		9,890	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**11,036,306**	**5,801,055**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**33,653,653**	**28,495,843**

Դավիթ Դաբաղյան
Տնօրեն
6 ապրիլի 2016թ.

Սուրեն Սկրտչյան
Ֆինանսական տնօրեն

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2015թ ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	6,194,169	-	2,740,692	8,934,861
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Տարվա զուտ շահույթ	-	-	*1,075,113*	*1,075,113*
Այլ համապարփակ եկամուտ	-	*22,280*	-	*22,280*
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	22,280	1,075,113	1,097,393
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**6,194,169**	**22,280**	**3,815,805**	**10,032,254**
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	6,194,169	22,280	3,815,805	10,032,254
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Տարվա զուտ շահույթ	-	-	*1,608,614*	*1,608,614*
Այլ համապարփակ եկամուտ	-	*21,880*	-	*21,880*
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	21,880	1,608,614	1,630,494
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ				
Հայտարարված շահաբաժիններ	-	-	*(977,061)*	*(977,061)*
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(977,061)	(977,061)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**6,194,169**	**44,160**	**4,447,358**	**10,685,687**

Դավիթ Զաքարյան
Տնօրեն
6 ապրիլի 2016թ

Սուրեն Սկրտչյան
Ֆինանսական տնօրեն

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2015թ. ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2015թ.	2014թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա զուտ շահույթ	*1,608,614*	*1,075,113*
Ճշգրտումներ		
Մաշվածության ամորտիզացիայի ծախս	677,669	589,084
Արժեզրկման պահուստին հատկացում	123,401	90,755
Կրեդիտորական պարտքերի ներումից եկամուտ	(164,332)	(131,250)
Հիմնական միջոցների վերագնահատումից (եկամուտ)/վնաս	(78,276)	382,613
Փոխարժեքային տարբերությունից վնաս	175,139	770,262
Տոկոսային եկամուտ	(326)	(251)
Տոկոսային ծախս	2,640,064	1,283,958
Շահութահարկի գծով ծախս	221,899	39,089
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	**5,203,852**	**4,099,373**
Պաշարների նվազում / (ավելացում)	153,659	(1,104,117)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի ավելացում	(3,735,805)	(2,408,200)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի ավելացում	1,784,721	84,359
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**3,406,427**	**671,415**
Վճարված շահութահարկ	(212,010)	(131,250)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**3,194,417**	**540,165**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,366,669)	(1,823,971)
Փոխառությունների տրամադրում, զուտ	(1,006,447)	(44,600)
Ստացված տոկոսներ	326	251
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(2,372,790)**	**(1,868,320)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում, զուտ	2,309,509	2,897,411
Տոկոսների վճարում	(2,546,845)	(1,553,457)
Շահաբաժինների վճարում	(478,760)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(716,096)**	**1,343,954**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	**105,531**	**15,799**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	38,147	118,560
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	**138,750**	**4,391**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**282,428**	**138,750**

Դավիթ Գազարյան
Տնօրեն
6 ապրիլի 2016թ

Սուրեն Սիրունյան
Ֆինանսական տնօրեն

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: